ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
«07» 12 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ-000118

Ձեռնարկողը՝ **«Երևաննախագիծ» ՓԲԸ**
ք. Երեւան, Բուզանդի փ. 1/3

Գործունեությունը՝ ***Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 000118
<07> 12 2020թ.

Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ

Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գործունեության կատեգորիա՝ «Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Արագածոտնի մարզ, Աշտարակ քաղաք

Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցումը նախատեսվում է իրականացնել Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Նարեկացի 61 հասցեում «Երևաննախագիծ» ՓԲԸ կողմից:

Նկարագրական մաս

Նախատեսվում է Աշտարակ քաղաքի, Նարեկացի 61 հասցեում գտնվող հիվանդանոցային համալիրի վերակառուցում, որի համար Աշտարակի քաղաքապետարանի կողմից տրվել է N01/18-07/2-83357-972Ա.ռ. 27.09.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք):

Վերակառուցվող մասնաշենքում նախատեսվել են.

- պոլիկլինիկական ծառայություններ,
- ընդունարան և անհետաձգելի բուժօգնության ծառայություն,
- ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք,
- 32 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ՝ վիրաբուժական (8 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (6 մահճակալ), թերապևտիկ մեծահասակների ու մանկական (14 մահճակալ) և ինֆեկցիոն (4 մահճակալ),
- շտապ բուժօգնության ծառայություն 1 հերթապահ բրիգադի հաշվարկով,
- ինտենսիվ թերապիայի սրահ (3 մահճակալ),
- անհետաձգելի բուժօգնության ծառայություն (2 մահճակալ),
- արյան պահպանման սենյակ,

ՀՀ ԲՆՊՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- օժանդակ ծառայություններ, ներառյալ՝ կենտրոնական ախտահանում,լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն, ինժեներական և մատակարարման ծառայություններ:

- դիարանը նախատեսվում է որպես հեռանկարային կառույց և շինարարություն չի նախատեսվում ներկայիս փուլում:

Նախագծման ընթացքում հիվանդանոցի և պոլիկլինիկայի ծառայությունները առանձնացվել են: Վերակառուցվող հիվանդանոցը՝ 3095,8մ^2, նորկառուցվող պոլիկլինիկան՝ 543,3մ^2 ընդհանուր մակերեսով, ինչպես նաև կաթսայատուն՝ 30մ^2 մակերեսով:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում է բժշկական կենտրոնի 1336մ^2 տարածքի կանաչապատում և բարեկարգում: Տարածքում կտնկվի արծաթափայլ եղևնի-2հատ, կարմիր թխկի 5 հատ, գնդաձև իլենի 8 հատ, սակուռա 8 հատ: Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցից (պայմանագրային հիմունքներով), ռետինե խողովակների միջոցով՝ կաթիլային համակարգով 230մ^3/տարի: Նախատեսվող կանաչապատման աշխատանքերի համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Նախատեսվում են նաև լուսավորություն (այդ թվում՝ վթարային կամ պահուստային լուսավորության համակարգով), անցուղիներ, բուժօգնության ավտոմեքենաների համար կայանատեղի կառուցում:Վերակառուցվող հիվանդանոցային համալիրի ջրագծի միացման տրամագիծը d-100մմ, ճնշումը p-1.0 մթն, կոյուղագծի տրամագիծը d-300մմ: Միացման կետերը նախատեսել հարևանությամբ անցնող ջրագծից, իսկ կոյուղին՝ Գ.Նարեկացի փողոցով անցնող կոյուղագծին:

Համաձայն նախագծի՝ ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կառուցել դիտահոր, պարզարան Փ2000, H-2,5մ, անհրաժեշտության դեպքում նախատեսել պոմպ: Հակահրդեհային հիդրանտի տեղադրման և կոյուղագծին միացման կետերում կառուցել դիտահորեր:

Բժշկական կենտրոնի վերակառուցվող մասնաշենքում նախատեսվում են ներքին սառը և տաք ջրամատակարարման, ջեռուցման, էլեկտրամատակարարման (այդ թվում պահուստային-ավտոնոմ), գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, սառեցման և հովացման, տեխնիկական անվտանգության համակարգեր, մասնաշենքի արդիական ներքին և արտաքին հարդարում:

Նախատեսվում է իրականացնել նաև համայնքի բնակլիմայական պայմաններին բնորոշ՝ այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ բժշկական կենտրոնի վերակառուցվող մասնաշենքում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար:

Վերակառուցման ենթակա բժշկական կենտրոնի շինարարության ընդհանուր տևողությունը կազմում է 21 ամիս, այդ թվում՝ 1 ամիս նախապատրաստական փուլ:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շինհրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի և կազմել 15969.2մ³/տարի: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 576մ³/տարի:

Աշխատանքների ընթացքում կառաջանա 2340տ ծավալով շինարարական աղբ, որը կտեղափոխվի Աշտարակի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր: Հանված հողային գրունտները՝ 1090մ³,պահեստավորում են թույլատրված վայրում, անհրաժեշտության դեպքում ետլիցք, իսկ ավելցուկի օգտագործումը՝ տարածքի բարեկարգման նպատակով:

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման, կամ մեղմացման միջոցառումներն են.

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու համար,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին,
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որը ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել,
- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- վտանգավոր թափոնները հանձնել ընկերություններին, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղադրման արտոնագիր,

ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՓՈՐՁԱՓՐՈՍԻԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- շինանյութերի ձեռքբերումն իրականացնել միայն լիցենզավորված մատակարարներից,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկայի միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- խուսափել բարձր աղմուկ ունեցող մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

Պատճառաբանական մաս

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել՝ են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները առողջապահության նախարարությունը, Արագածոտնի մարզպետարանը և քաղաքաշինության կոմիտեն: Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքում գործունեության իրականացման վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ, որը հանրության կողմից հավանության է արժանացել:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Աշտարակի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը, շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները :
- Նախատեսվող հեռանկարային դիարանի կառուցման ժամանակ գործունեությունը ներկայացնել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության:
- Վտանգավոր թափոնների հանձնումն իրականացնել այն ընկերություններին, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ նշված պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Վ. Ռաիսյան